Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Տ Ա Վ ՈՒ Շ Ի Մ Ա Ր Զ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մ Ա Ր Զ Խ Ո Ր Հ Ր Դ Ի Ն Ի Ս Տ Ի

11 հուլիսի 2019թ.

Ք.Իջևան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2019 թվականի հուլիսի 11-ին, ժամը 15^{00}-ին կայացած Տավուշի մարզխորհրդի հերթական նիստի

1. **Հաշվետվություն 1-ին կիսամյակի ընթացքում մարզում գյուղատնտեսական աշխատանքների և բերքահավաքի ուղղությամբ կատարած աշխատանքների մասին:**

Զեկուցող՝ Վ. Սուքոյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

1.1 Տավուշի մարզի գյուղատնտեսության ոլորտում նախատեսված առաջիկա աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Թ. Ստեփանյան - ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ

2. **Տավուշի մարզում ՀՀ պետական բյուջեից տրամադրվող միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի ընթացքի մասին:**

Զեկուցող՝ Գ. Հարությունյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ

3. **Տավուշի մարզպետարանի սոցիալական ոլորտում իրականացվող ծրագրերի մասին:**

Զեկուցող՝ Ռ. Տիգրանյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

4. **Մարզում զբաղվածության ծրագրերի իրականացման մասին:**

Զեկուցող՝ Ս. Ցուցուլյան - <<Զբաղվածության պետական ծառայություն>> գործակալության Իջևանի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալ

5. **2019 թվականի Տավուշի մարզի ՏԻՄ ընտրությունների մասին:**

Զեկուցող՝ Հ. Փաշինյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ՀԳՄ և ՏԻՄ վարչության պետի պարտականությունները կատարող

6. **Մարզի մշակույթի ոլորտի ռազմավարության և առաջիկա ծրագրերի ներկայացում:**

Զեկուցող՝ Մ. Ղազումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժ/պ

7. **ՋՕԸ գործունեության և առաջիկա ծրագրերի մասին:**

Զեկուցող՝ Յ. Որսկանյան - Տավուշ ՋՕԸ-ի գործադիր տնօրեն

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի

Նիստը վարում էր Տավուշի մարզպետ Հ.Զոբանյանը:

Ներկա էին մարզպետի տեղակալը, խորհրդականները, օգնականները, գլխավոր քարտուղարը և նրա տեղակալը, վարչությունների պետերը, բաժինների վարիչները, պատասխանատու մասնագետները, մարզխորհրդի անդամները:

Մարզխորհրդի 24 անդամներից բոլորը ներկա էին:

Ողջույնի խոսքով նիստը բացեց մարզպետ Հ.Զոբանյանը:

1. **Հաշվետվություն՝ 1-ին կիսամյակի ընթացքում մարզում գյուղատնտեսական աշխատանքների և բերքահավաքի ուղղությամբ կատարած աշխատանքների մասին**

/Զեկուցող՝ Վ. Սուքոյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ /

Զեկուցողը ներկայացրեց, որ մարզի գյուղատնտեսության նշանակության հողատեսքերը կազմում են 110762.8 հա, որից՝

վարելահող -25588.4 հա
բազմամյա տնկարկներ - 1902.2 հա, որից՝
խաղողի այգիներ - 1198.1հա,
պտղատու այգիներ - 704.1 հա
խոտհարքներ - 9401.3 հա
արոտավայրեր - 63065.6 հա
այլ - 10805.4 հա

Բացի վերը նշվածը տնամերձերում ևս կան՝

բազմամյա տնկարկներ - 2030.8 հա, որից՝
խաղողի այգիներ - 158.9 հա,
պտղատու այգիներ - 1871.9 հա

25588.4հա վարելահողից 7210.7 հա պատերազմական գործողությունների պատճառով չի մշակվում: Նախնական տվյալներով 18377.7 հա փաստացի վարելահողից

2019թ. ցանքի տակ է դրվել 7663 հա՝ նախորդ տարվա 7503 հա-ի դիմաց /+160 հա/ /կցվում է տեղեկատվությունը/:

Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականի գարնանացանի համար գարնանացան գարու, գարնանացան ցորենի, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում մարզի 16 համայնքների /բնակավայրերի/ 182 հողօգտագործողների տրամադրվել է 2.070 տոննա գարնանացան գարու, 9.36 տոննա գարնանացան ցորենի, 0.585 տոննա եգիպտացորենի, 2.774 տոննա առվույտի, 1.2 տոննա կորնգանի, 0.084 տոննա ոլոռի սերմացուներ, որոնցով կատարվել ընդամենը 195.204 հա ցանք /+88.524 հա 2018թ.համեմատ/:

Անհատ ֆերմերների կողմից գարնանը հիմնվել են 65 հա միջին ինտենսիվության այգիներ /արքայանարինջ,թուզ և այլն/:

2018թ.աշնանը մարզում կատարվել է շուրջ 4150 հա աշնանացան՝ 2017թ.3417 հա-ի դիմաց /+733 հա/: Ցանքատարածությունների ավելացմանը նպաստեց նաև ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 14-ի N 1042-Ն որոշման համաձայն ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին սոցիալական աջակցություն ստացող 22 սահմանամերձ բնակավայրերի շուրջ 2100 գյուղատնտեսական հողօգտագործողներին փաստացի ցանված 2562.3 հա աշնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների համար որպես պետական աջակցություն 153.7 մլն.դրամի հատկացումը:

Մարզի համայնքներում ընթացքի մեջ են բերքահավաքի աշխատանքները:

10.07.2019թ.դրությամբ օպերատիվ տվյալներով հնձվել է շուրջ 607 հա գարի, 1178 հա աշնանացան ցորեն /միջին բերքատվությունը 8-12 ց/հա/, արտհնձին մասնակցում է 39 հատ հացահատիկահավաք կոմբայն: Կուտակվել է 8250 տոննա խոտ,263 տոննա ծղոտ, հավաքվել է շուրջ 650 տոննա պտուղ-հատապտուղ, 70 տոննա կարտոֆիլ, 150 տոննա բանջարեղեն:

Մարզում կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ կայուն անասնահամաճարակային վիճակ է: Պետպատվերի շրջանակներում հակաանասնահամաճարակային կանխարգելիչ միջոցառումները իրականացվում են ըստ ժամանակացույցի:

Ավարտելով իր զեկույցը, Վ.Սուքոյանը նշեց, որ 2019թ. մայիսի 10-ից հունիսի 20-ն ընկած ժամանակահատվածում կարկտահարությունների, հորդառատ անձրևների և հեղեղաջրերի հետևանքով տուժել են մարզի 12 համայնքների և բնակավայրերի 2970 գյուղացիական տնտեսությունների 686 հա ցանքատարածություններ և բազմամյա տնկարկներ: Մարզային հանձնաժողովի կողմից կազմվել է ամփոփ ակտ և սահմանված կարգով ներկայացվել ՀՀ կառավարություն:

Զեկույցից հետո մարզպետը համայնքների ղեկավարներին համառոտ ներկայացրեց առաջիկայում նախատեսված ծրագրերի մասին՝ գյուղատնտեսության ապահովագրում և հակակարկտային ցանցերի ձեռք բերում, որոնց առկայության դեպքում գյուղատնտեսությունը էլ ավելի արդյունավետ կդառնա:

1.1 Տավուշի մարզի գյուղատնտեսության ոլորտում նախատեսված առաջիկա աշխատանքների մասին:

/Զեկուցող՝ Թ.Ստեփանյան - ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ/

Զեկուցողը ներկայացրեց, որ հիմնական նպատակը մարզի գյուղատնտեսության արդիականացումն է, ընտրել ենք հիմնական առաջնահերթությունը, ծրագրերը բաժանել ենք մի քանի մասի՝ արդյունավետությանը վերաբերվող ծրագրեր,շահութաբերությանը և գյուղատնտեսությանը վերաբերվող ծրագրեր, որոնք ի սկզբանե ենթադրում են շահութաբեր կոմպոնենտներ, որոնք էլ իրենց հերթին կխթանեն արդյունավետության բարձրացմանը: Մյուսը պետական կառավարման ծրագրերն են, որի վերաբերյալ մի քանի հանդիպումներ ենք ունեցել, պետական կառավարման գյուղատնտեսության պատասխանատուների աշխատանքը վերաիմաստավորելու և վերաքարտեզագրելու անհրաժեշտություն կա, ինչի համար իրականացրել ենք մի քանի գործնական քայլեր և ենթադրում ենք, որ առաջիկայում այն դրական արդյունքներ կունենա: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ մեր մարզի 90 տոկոսը գյուղական միջավայրում ապրող բնակչությունն է:Ընտրվել է Խաշթառակ համայնքը, և նրա տեսլականը 3-4 տարուց ցույց կտա իր արդյունքները գյուղատնտսական ոլորտում:Համայնքային իշխանությունների մասնակցությունը գյուղատնտեսության ամենօրյա աշխատանքներին անհրաժեշտություն է: Գործունեության ձևաչափի նոր մոտեցումներ պետք է ձևակերպվեն, պետք է համախմբվեն մեր ջանքերը:

Թ.Ստեփանյանը խնդրեց համայնքների ղեկավարներին ակտիվ համագործակցել՝ ծրագրերից դուրս չմնալու համար:

Խոսվեց ելակի ջերմոց ստեղծելու մասին, քննարկվեցին նաև այլ հարցեր:

Հաղթանակ համայնքի ղեկավարը ներկայացրեց, որ 20 տ դեղձի իրացման խնդիր կա:

Մարզպետի կողմից տեղում տրվեցին համապատասխան հանձնարարականներ:

2. Տավուշի մարզում ՀՀ պետական բյուջեից տրամադրվող միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի ընթացքի մասին

/Զեկուցող՝ Գ. Հարությունյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ /

Զեկուցողը ներկայացրեց, որ 2019թ. ՀՀ պետական բյուջեից սուբվենցիայի ծրագրին մասնակցելու նպատակով ՀՀ Տավուշի մարզի 24 համայնքներից 12-ը ներկայացրել են նախնական հայտեր՝ 1,37մլրդ դրամ արժողությամբ: Ըստ նախնական հայտերի նշված

գումարի աշխատանքներից 427մլն. դրամը նախատեսվել է կատարել համայնքային բյուջեների, իսկ 942 մլն. դրամը՝ ՀՀ պետական բյուջեի միջոցներով: Հայտերը ներկայացվել են համաձայն ՀՀ կառավարության 2019թ հունվարի 31-ի թիվ 62-Ն որոշմամբ սահմանված կարգի:

12 համայնքների կողմից ներկայացվել են ընդհանուր առմամբ 20 սուբվենցիոն ծրագրեր: Նշված ծրագրերից 11-ը հաստատվել է, 2-ը կքննարկվի 11.07.19թ. Կոմիտեի նիստին, 5-ը գտնվում են շրջանառության մեջ: Համաձայն հայտերի նախնական ուսումնասիրության վերոգրյալ ծրագրերը ևս հավակնում են հաստատման:

Երկու ծրագիր /Աչաջրի կոյուղու կառուցում և Այգեհովիտի նոր ինքնաթափ բեռնատարի ձեռքբերում/ համայնքների կողմից դադարեցվել են /2019թ. ՀՀ պետական բյուջեից ՀՀ Տավուշի մարզի համայնքների սուբվենցիայի ծրագրի ցանկը և ընթացքի մասին տեղեկատվությունը կցվում է/:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

3. **Տավուշի մարզպետարանի սոցիալական ոլորտում իրականացվող ծրագրերի մասին**

/Զեկուցող՝ Ռ. Տիգրանյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ /

Ռ.Տիգրանյանը ներկայացրեց, որ ՀՀ Տավուշի մարզի սոցիալական խնդիրները վերհանելու, սոցիալական ոլորտի զարգացման հայեցակարգը և ռազմավարությունը մշակելու նպատակով Տավուշի մարզպետարանում կազմակերպվել են հանդիպումներ, կլոր սեղաններ և քննարկումներ սոցիալական բնագավառի պետական կառույցների, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ: Նախանշվել են հիմնախնդիրները, գնահատվել են կարիքները, ոլորտային նպատակները, արդյունքային ցուցանիշները: Սոցիալական ոլորտում պետք է վարվի համակարգված քաղաքականություն, գործընթացները և մեթոդաբանությունը պետք է լինեն միասնական, պետք է իրականացվի կորպորատիվ սոցիալական փոխհամագործակցություն:

Մարզում գործող միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների, ֆոնդերի, դոնորների և բարերարների կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ ստեղծվում է տեղեկատվական բազա՝ մատրիցա, որպեսզի ունենանք աշխատանքները կազմակերպելու և կոորդինացնելու համագործակցված հնարավորություն:

Սոցիալական խնդիրները լուծելու նպատակով ՀՀ Տավուշի մարզպետի կարգադրությամբ ստեղծվել են հանձնաժողովներ, որոնք ըստ գործելակարգի և ժամանակացույցի անցկացնում են նիստեր և ընդունում որոշումներ.

ա/ զբաղվածության ծրագրերի գծով

բ/ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող

գ/ սոցիալական օժանդակություն հատկացնող
դ/ վարձատրվող հասարակական աշխատանքները համակարգող
ե/առկա է նաև սոցիալական համագործակցության պայմանագիր ՍԱՏԳ-ների և շահագրգիռ այլ կառույցների, անհատների հետ:

Սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջեն կազմում է 2.926.375.4 հազար դրամ, / կցվում է աղուսյակը/:

Զեկուցողը նշեց, որ մեր նպատակն է մեծացնել աշխատանք փնտրողներից, գործազուրկներից աշխատանքի տեղավորվածների, աջակցություն ստացած հաշմանդամների և սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված խոցելի խմբերի տեսակարար կշիռը:

Սոցիալական ոլորտում նախատեսված են կամ իրականացվում են հետևյալ ծրագրերը.

1. Սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների շենքային պայմանների բարելավում և սոցիալական տարբեր ծառայությունների գործունեության կազմակերպում և համակարգում՝ ակնկալելով համալիր սոցիալական ծառայություններ և որակի բարձրացում: Այստեղ ներառվում են նաև սոցծառայություններ մատուցող կառույցների հագեցումը համակարգչային տեխնիկայով, համացանցային կապով,ավտոտրանսպորտով և գույքով:
2. 2-րդ ծրագիրը վերաբերում է սոցիալական աշխատողի ինստիտուտի զարգացմանը, կոնսորցիումի ձևավորմանը, համադրելի որակավորումների, մասնագիտացումների, վերապատրաստումների իրականացմանը: Սոցիլական աշխատողը պետք է կարողանա գնահատել կարիքները, ունենա դոնորներ և հովանավորներ որոնելու հմտություններ, կարողանա իրականացնել հորիզոնական համագործակցություն:
3. 3-րդ ծրագիրը սոցիալական բնագավառում մատչելի միջավայի ապահովումն է: Մարզի համայնքների հասարակական նշանակության կառույցներում, մշակույթային և սպորտային կենտրոններում, առողջապահական և պետական հիմնարկներում պետք է իրականացվեն ընդլայման, հարմարեցման, թեքահարթակների կառուցման և այլ համապատասխան աշխատանքներ: Նոր կառուցվող շինություններում շինթույլտվություններ տրամադրելիս պետք է նկատի ունենալ վերը նշված հանգամանքները: Ի վերջո պետք է ապահովենք ՄԱԿ-ի <<Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին>> կոնվենցիայի պահանջները:
4. 4-րդ ծրագիրը փախստական ընտանիքների բնակարանային ապահովումն է: Մեր մարզում լուծվել են 99 փախստական ընտանիքների բնակարանային խնդիրները: Մարզում ունենք 1642 փախստական ընտանիք: Ակնկալվում է ֆինանսավորում պետբյուջեից և դոնորներից: Անհրաժեշտ եմ համարում համայնքի ուշադրությունը կենտրոնացնել այս խնդրի վրա:
5. Հաջորդ ծրագիրը զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքներին բնակարանով ապահովելն է: Նման 92 ընտանիքների բնակարանային հաշվառման փաստաթղթերը սահմանված կարգով ուղարկվել է ՀՀ ՊՆ ուսումնասիրման՝ բնակարանի

գնման վկայագիր տրամադրելու նպատակով: Նշեմ, որ 277 ընտանիքից 185-ին ցուցաբերվել է աջակցություն: Դեռևս հաշվառման մեջ ունենք 92 ընտանիք:

Բացի վերոնշյալ ծրագրերը պլանավորում ենք նաև.

ա/ ծերերի և հաշմանդամների ցերեկային խնամքի կենտրոնների հիմնադրում

բ/ զորացրվածների համար ինտեգրման ծրագրի ստեղծում

գ/ երիտասարդության հիմնախնդիրների, դաստիարակության, արժեքների, ընտանիքի, վստահության և այլ խնդիրների լուծման ծրագրի ներդնում:

Ավարտելով իր զեկույցը, Ռ.Տիգրանյանը իր շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնեց մարզում գործող մի շարք միջազգային , բարեգործական կազմակերպություններին, հիմնադրամներին, հասարակական կազմակերպություններին, անհատ բարերարներին, որոնք համագործակցելով մարզպետարանի հետ, իրականացնում են աջակցության ծրագրեր՝ համահունչ պետական քաղաքականությանը: Մասնավորապես՝ <<Հույսի Կամուրջ>> ՀԿ-ին, Վորլդ Վիժն միջազգային կազմակերպությանը, <<ՍՕՍ մանկական գյուղեր>> հայկական բարեգործական հիմնադրամի Իջևանի մասնաճյուղին, Հայ օգնության ֆոնդին, Միջազգային Կարմիր խաչին և մյուս առաքելություն իրականացնող դոնորներին: Ժամանակ առ ժամանակ անցկացնելով սոցիալական ոլորտի ռազմավարական սեսիաներ , նշելով նպատակ և գնալով այդ ռազմավարական նպատակի իրականացմանը՝ կբարձրացնենք աշխատանքի արդյունավետությունը, կլուծենք կարևոր խնդիրներ, որոնք կբերեն նաև ուրիշ խնդիրների լուծմանը:

4. Մարզում զբաղվածության ծրագրերի իրականացման մասին

Զեկուցող՝ Ս. Ցուցույան - <<Զբաղվածության պետական ծառայություն>> գործակալության Իջևանի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալ

Զեկուցողը ներկայացրեց, որ զբաղվածության տարածքային կենտրոններում հաշվառված գործազուրկների թիվը 2019թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 4100 մարդ , որից 2544 կանայք են (62%), 943 (23 %) գյուղաբնակներ:

Գործազուրկի կարգավիճակ ստացած աշխատանք փնտրողների 36.7%-ը հաշվառված են Իջևանի, 15.2%-ը՝ Նոյեմբերյանի, 10.3%-ը՝ Բերդի և 37.8%-ը՝ Դիլիջանի զբաղվածության տարածքային կենտրոններում:

Անցած տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ Իջևանի ԶՏԿ-ում հաշվառված գործազուրկի կարգավիճակ ունեցող աշխատանք փնտրողների թիվը նվազել է 201-ով, Դիլիջանում՝ 7-ով, Բերդում աճել է 138-ով, Նոյեմբերյանում՝ 44-ով:

Հետբուհական բարձրագույն կրթություն ունեցողները կազմել են մարզի տարածայքին կենտրոններում հաշվառված գործազուրկների 11.7, միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողները՝ 18.7, նախնական մասնագիտական

(արհեստագործական) կրթություն ունեցողները՝ 3.2, ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողները՝ 57, հիմնական ընդհանուր կրթություն ունեցողները՝ 9, տարրական կրթություն ունեցողները՝ 0.4 տոկոս:

Մարզի զբաղվածության տարածքային կենտրոններում հաշվառված 16-19 տարեկան գործազրուկների թիվը 2019թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմել է ընդհանուր հաշվառվածների 0.4, 20-24 տաերկանները՝ 10.6, 25-29 տարեկանները՝ 13.3, 30-34 տարեկանները՝ 14.3, 35-44 տարեկանները՝ 30.1, 45-54-տարեկանները՝ 17, 55 և ավելի տարեկանները՝ 14.3 տոկոս:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2019թ. առաջին եռամսյակում դեռևս բարձր է 3 տարուց ավել (37.7%) և 1-3- տարի (35.7%) գործազրկության տևողություն ունցողների թիվը: 7-11 ամիս գործազրկության տևողություն ունեցող աշխատանք փնտրողների թիվը կազմել է հաշվառվածների 13.2, 4-6 ամիս ունեցողներինը՝ 7.6, մինչև 3 ամիս ունեցողներինը՝ 5.8 տոկոս:

Ս.Ցուցուլյանը նշեց նաև, որ զբաղվածության տարածքային կենտրոնները որոշակի աշատանքներ են կատարել գործատուների հետ՝ կենտրոններում հաշվառված աշխատանք փնտրողներին զբաղվածության ակտիվ ծրագրերում ներգրավելու ուղղությամբ: 2019թ. առաջին կիսամյակում մարզի կտրվածքով զբաղվածության ակտիվ ծրագրերում ընդգրկվել են 234 աշխատանք փնտրողներ (հաշվառված գործազուրկի կարգավիճակ ունեցող աշխատանք փնտրողների 5.7%), որից 34.7 %-ը Իջևանի ԶՏԿ-ում հաշվառված աշխատանք փնտրողներ են, 24.3%-ը՝ Նոյմբերյանի, 20.1%-ը՝ Բերդի, 20.9 %-ը՝ Դիլիջանի տարածքային կենտրոններում հաշվառված աշխատանք փնտրողներ:

92 աշխատանք փնտրող (ծրագրում ընդգրկվածների 39.3%-ը) ընդգրկվել են վարձատրվող հասարակական աշխատանքներ ծրագրում, 51-ը՝ (ծրագրում ընդգրկվածների 21.8%-ը) աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության համար դրամական օգնության տրամադրում ծրագրում, 45-ը՝ (ծրագրում ընդգրկվածների 19.2%-ը) աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին ծրագրում, 16-ը՝ (ծրագրում ընդգրկվածների 6.8%-ը) մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում ծրագրում, 16-ը՝ (ծրագրում ընդգրկվածների 6.8%-ը) մասնագիտական ուսուցման կազմակերպում ծրագրում:

Մարզպետն անդրադարձավ <<Վարձատրվող հասարակական աշխատանքներ>> ծրագրին, հորդորեց համայնքների ղեկավարներին՝ ակտիվ աշխատանքներ տանել բնակչության շրջանում ծրագրին մասնակցություն ունենալու համար:

Բերքաբեր համայնքի ղեկավարը ներկայացրեց, որ իր համայնքում առկա են հողի չափագրման հետ կապված խնդիրներ, ուստի բնակչությունը չի կարող օգտվել նշված ծրագրից:

<u>Հանձնարարվեց.</u>

ՀՀ Տավուշի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի վարիչ Ա.Նազարյանին.

- 3 շաբաթվա ընթացքում ներկայացնել տեղեկատվություն՝ մարզի համայնքներում առկա չափագրումների հետ կապված խնդիրների վերաբերյալ:

5. 2019թ. ՀՀ Տավուշի մարզի ՏԻՄ ընտրությունների մասին

/Զեկուցող՝ Հ. Փաշինյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ՀԳՄ և ՏԻՄ վարչության պետի պարտականությունները կատարող/

Զեկուցողը ներկայացրեց, որ ՀՀ Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան, Ակնաղբյուր և Ազատամուտ համայնքներում տեղի է ունեցել համայնքի ղեկավարի, իսկ Իջևան և Գետահովիտ համայնքներում ավագանու ընտրություններ:

17.02.2019թ. Ներքին Ծաղկավան համայնքի ղեկավարի ընտրությանը գրանցվել է համայնքի ղեկավարի 2 թեկնածու՝ Իսկանդար Մեհրաբյանը և Մարզպետ Մխիթարյանը:

456 ընտրողներից ընտրությանը մասնակցել են 341-ը: Գրանցված թեկնածուներից Իսկանդար Մեհրաբյանի օգտին քվարկել է 179 ընտրող, իսկ Մարզպետ Մխիթարյանի օգտին 160-ը:

Ձայների առավելությամբ Ներքին Ծաղկավան համայնքի ղեկավար է ընտրվել Իսկանդար Մեհրաբյանը:

17.02.2019թ. Ակնաղբյուր համայնքի ղեկավարի ընտրությանը գրանցվել է համայնքի ղեկավարի 3 թեկնածու՝ Դոլմազյան Կարենը, Եգանյան Գրիգորը և Մայիլյան Վրույրը:

Ակնաղբյուր համայնքում 383 ընտրողներից ընտրությանը մասնակցել են 304-ը:

Գրանցված թեկնածուներից Դոլմազյան Կարենի օգտին քվարկել է 200-ը, Եգանյան Գրիգորի օգտին՝ 30-ը, իսկ Մայիլյան Վրույրի օգտին՝ 68-ը:

Ձայների առավելությամբ Ակնաղբյուր համայնքի ղեկավար է ընտրվել Կարեն Դոլմազյանը:

Ազատամուտ համայնքի նախկին ղեկավար Ժորա Մարտիրոսյանի հրաժարականից հետո, ՀՀ Տավուշի մարզպետի 23.11.2018թ. թիվ 158-Ա որոշմամբ Ազատամուտ համայնքի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Վահագն Ալավերդյանը:

ՀՀ կառավարության 21.02.2019թ. թիվ 132-Ն որոշմամբ նշանակվել է Ազատամուտ համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն: Ընտրությանը գրանցվել է համայնքի ղեկավարի մեկ թեկնածու՝ Վահագն Ալավերդյանը: 2310 ընտրողներից ընտրություններին մասնակցել են 1172-ը: Գրանցված թեկնածուի օգտին քվերակել է 1065 ընտրող, իսկ 72 ընտրող քվեարկվել է դեմ:

17.02.2019թ. Իջևան և Գետահովիտ համայնքներում տեղի են ունեցել ավագանու ընտրություններ: Իջևան համայնքում 14297 ընտրողից ընտրությանը մասնակցել են 8261-ը, իսկ Գետահովիտ համայնքում 1744 ընտրողից ընտրությանը մասնակցել են 396-ը:

Մարզում կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցել են կազմակերպված և «Ընտրական օրենսգրքի» պահանջներին համապատասխան, ինչպես նաև ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության կողմից պատշաճ կերպով իրականացվել են օրենսդրությամբ և ընտրությունների կազմակերպման ժամանակացույցով վերապահված բոլոր լիազորությունները:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 17 հուլիսի 2018 թվականի «2019 թվականի տեղական ինքնակառավարման մարմնինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին» թիվ 26-Ա որոշման համաձայն՝ 2019թ. սեպտեմբերի 29-ին Տավուշի մարզի Իջևան և Խաշթառակ համայնքներում կայանալու է համայնքի ղեկավարի, իսկ Խաշթառակ և Սարիգյուղ համայնքներում ավագանու անդամների հերթական ընտրություններ:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

6. **Մարզի մշակույթի ոլորտի ռազմավարության և առաջիկա ծրագրերի ներկայացում**

/Զեկուցող՝ Մ. Ղազումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժ/պ/

Զեկուցողը ներկայացրեց, որ ՀՀ Տավուշի մարզը հարուստ է ինչպես բնական մեծ ժառանգությամբ՝ գեղատեսիլ ձորեր, ջրվեժներ, քարափներ, սարավանդներ, բացատներ, բնական ջրամբարներ, քարայրներ, եզակի ծառատեսակների պուրակներ, տարաշխարհիկ ծառեր և թփեր, այնպես էլ մարզին մի ուրույն գեղեցկություն և գրավչություն հաղորդող անձեռակերտ բնության հրաշալիքներին համահունչ բնակիչների կողմից կերտված պատմաճարտարապետական հուշարձաններով: Այստեղ հայտնաբերված են տարբեր ժամանակաշրջանների կիկլոպյան ամրոցներ, միջնադարյան քարանձավային բնակավայր Լաստիվերում, ինչպես նաև վաղ, միջին և ուշ միջնադարյան վանական համալիրներ, փոքրիկ մատուռներ, խաչքարեր և գերեզմանաքարեր: Այսպիսի նկարագիր ու ժառանգություն ունցող մարզը անհրաժեշտ է, որ ունենա նաև իր պատմական արժեքները պահպանելու և սերունդներին փոխանցելու ընդունակ արվեստագետ, արվեստասեր մարդիկ, որոնց աշխատանքի արդյունքում առավել կզարգանան մշակույթի բոլոր ճյուղերը, իսկ մարզն աշխարհին կներկայանա իր ողջ ստեղծագործական ներուժով:

ՀՀ Տավուշի մարզի մշակույթի ոլորտում վերջին տարիներին իրականացվող ծրագրերը ընդհանուր առմամբ նպատակ ունեն բաձրացնելու մշակույթի դերը, պահպանելու ազգային մշակութային ժառանգությունը, արդյունավետ օգտագործելու ներուժը, ապահովելու մշակութային ավանդական ձևերի զարգացումը:

Մարզի մշակույթի բնագավառն իր մեջ ընդգրկում է կրթական, ստեղծագործական - կատարողական հիմնարկներ: Մարզի տարածքում գործում են Հայաստանի արվեստի պետական ակադեմիայի Դիլիջանի մասնաճյուղը, արվեստի 1 պետական քոլեջ, 11 երաժշտական, գեղարվեստի և արվեստի 4 դպրոց, 32 մշակույթի տուն և ակումբ, 1 մարզային գրադարան և 23 քաղաքային և գյուղական գրադարան, 4 զբոսայգի, 1 մշակույթի և ժամանցի կենտրոն /<<Ավանդույթ>>ՓԲԸ/, 2 պատկերասրահ /Իջևան, Դիլիջան/, 3 ժող. Նվագարանների համույթ /Իջևան, Դիլիջան,Այրում/, 4 թանգարան /Իջևան /1/, Դիլիջան/2/, Բերդ/1/, <<Ասպարեզ>> /1/ թատրոն/Նոյեմբերյան/: Մարզկենտրոնում է գտնվում Տավուշի մարզային արխիվը, որի 167 ֆոնդերում պահպանվում է գիտապատմական արժեք ներկայացնող 22 գործ, 1872 լուսանկար: 2014թ. Իջևանում սկսել է գործել Արհեստների կենտրոնը: Կան պատմամշակութային և տեղական նշանակության հուշահամալիրներ, հուշակոթողներ, հուշարձաններ և այլն: Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների Տավուշի մարզի ցանկը ներառում է 1996 հուշարձան՝ 797 պահպանական միավորով: Մարզում պետական մշակութային քաղաքականության և մշակույթի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքները համակարգում է մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը՝ համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան մասնագետների, մարզում գործող մշակութային կազմակերպությունների, երիտասարդական հասարակական կազմակերպությունների, ինքնագործ խմբերի և անհատ կատարողների հետ:

ՀՀ Տավուշի մարզպետարանի ջանքերը 2019թ. առաջին կիսամյակում ուղղված են եղել մարզի մշակութային կազմակերպությունների գործունության համախմբմանը, արժեքները գնահատելուն: Այդ աշխատանքներում ընդգրկված է եղել մշակույթի ոլորտը համակարգող փորձագետը,մարզպետարանի, համայնքային մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչները:

Կատարվել է բազմակողմանի ուսումնասիրություն մշակույթի բոլոր ոլորտներում, վեր են հանվել խնդիրները և նախնական առաջարկներ են արվել այդ խնդիրների լուծման ուղղությամբ:

Կազմակերպչական առումով առանձնացվել են հետևյալ ռազմավարական խնդիրները.

Մարզի մշակութային կենտրոնների միասնական աշխատանքային խմբեր ստեղծում, սիրողական մշակութային խմբերի շրջագայությունների ապահովում, մարզային մրցույթների և փառատոնների ստեղծում, երիտասարդական ակումբների ստեղծում, մշակութային կենտրոնների հաստիքների վերանայում, մշակութային կառույցների համագործակցություն տեղական և միջազգային հկ-ների և հիմնադրամների հետ:

Մեթոդաբանության առումով ունենք հետևյալ խնդիրը.

Մարզի պատմության ներկայացում, միջազգային փորձի ուսումնասիրություն, մշակույթային կառույցների դրամաշնորհային մրցույթներին մասնակցության ապահովում:
Կրթական և մշակութային ոլորտները սերտորեն շաղկապված են և այս առումով վեր են հանվել հետևյալ ռազմավարական նշանակություն ունեցող խնդիրները.

Մարզի բնակչության օտար լեզվի ուսուցում, դպրոցներում և խմբակներում մարզի պատմության ուսուցում, գեղարվեստի, արվեստի, երաժշտական դպրոցների մշակութային կենտրոնների ուսուցիչների և տնօրենների վերապատրաստում, գրադարանների և թանգարանների տնօրենների վերապատրաստում: Իհարկե, սա նշանակում է, որ վերապատրաստումների արդյունքում մենք ունենալու ենք համապատասխան որակավորում ունեցող տնօրեններ, գրադարանավարներ, ուսուցիչներ:

Մ.Ղազումյանը խոսեց նաև առաջիկա ծրագրերի մասին.

«Ազգային երգ ու պարի հիմնադրամ կրթամշակութային ասոցիացիայի» կողմից մարզում իրականացվում են դասընթացներ՝ պարուսույցների վերապատրաստման նպատակով: 2019-20 ուսումնական տարվանից մարզի բոլոր հանրակրթական դպրոցների 5-րդ դասարաններում կուսուցանվի «Ազգային երգ ու պար» առարկան: Ծրագրի համակատարողն է «Կարին» հասարակական կազմակերպությունը՝ Գագիկ Գինոսյանի ղեկավարությամբ:

Այս առումով կրկին անգամ հրավիրում եմ համայքի ղեկավարների և վարչական ղեկավարների ուշադրությունը, քանի որ առարկայի ներդրումը դպրոցական ծրագրում էապես փոխում է համայնքի կյանքը, և պետք է նաև բոլորը շահագրգռված լինեն գյուղի դպրոցում պարուսույցների առկայությունն ապահովելու գործում:

Հուլիսի 28-ին Հայ առաքելական եկեղեցին տոնում է Վարդավառը: Մշակութային միջոցառումների ծրագրով Տավուշի մարզպետարանը հայտարարել է դրամաշնորհային մրցույթ հասարակական կազմակերպությունների միջև՝ ծրագրի իրականացման համար: Ծրագրի արժեքն է 1 մլն. 80 հազ. դրամ: Հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ հուլիսի 15-ը: Մրցույթին կարող են մասնակցել կանոնադրությամբ մշակութային ուղղվածություն ունեցող հասարակական կազմակերպությունները:

Ընթացքի մեջ են ավանդական փառատոնները: Առաջիկայում Բերդի տարածաշրջանում նախատեսված է Մեղրի և հատապտուղների փառատոնը, որին մշտապես մասնակիցների մեծ մասնակցություն է ապահովվում:

Կողբում օգոստոս ամսին նախատեսվում է անցկացնել մրգօղիների փառատոն, Դիլիջանում անց կկացվի ամենամյա «Արվեստի և արհեստի փառատոնը»: Այժմ ընթացքի մեջ է «Դիլիտոն» փառատոնը, որը կազմակերպվում է ամեն ամսվա վերջին կիրակի օրը, ներկայացվում են Դիլիջան համայնքի բնակիչների ձեռքի աշխատանքները, տեղի է ունենում ցուցահանդես վաճառք:

Մ.Ղազումյանը խոսեց առաջիկայում նախատեսված այլ միջոցառումների մասին /տեղեկանքը կցվում է/:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

7. ՋՕԸ գործունեության և առաջիկա ծրագրերի մասին

/Զեկուցող՝ Յու.Որսկանյան – Տավուշ ՋՕԸ գործադիր տնօրեն/

Զեկուցողը ներկայացրեց, որ Տավուշ ՋՕԸ-ն 2017թ. փետրվարից իրականացնում է Տավուշի մարզի Նոյեմբերյանի, Իջևանի և Բերդի տարածաշրջանների 40 համայնքների ոռոգման համակարգերի շահագործման և պահպանման գործառույթը: 2019թ. ոռոգման համակարգերի նախապատրաստական աշխատանքները սկսվել են փետրվարի 1-ից, կատարվել են մայր և միջտնտեսային 149.3 կմ երկարությամբ ջրանցքների մաքրման աշխատանքներ, որից 148.4 կմ ձեռքով, 0.93 կմ մեքենա մեխանիզմով:44.9 կմ երկարությամբ ջրանցքների վրա կատարվել են մասնակի նորոգման աշխատանքներ, նորոգվել են 75 հատ ՀՏԿ-ներ և ջրաչափական դիտակետեր:Ջրամատակարարման համար նախապատրաստվել են 20 պոմպակայաններ՝ իրենց ճնշումային խողովակաշարերով:

Ջրային կոմիտեի և մարզպետարանի համապատասխան մասնագետների հետ քննարկվել ու ըստ առաջնահերթությունների կազմվել է ջրատնտեսական համակարգերի նախապատրաստման պլան գրաֆիկ և մեր գործունեությունն իրականացվում է ըստ այդ պլան գրաֆիկի: Այս պահի դրությամբ շուրջ 6400 ջրօգտագործողների հետ 4430 հա հողատարածքների ոռոգում իրականացնելու համար ունենք ջրօգտագործման պայմանագրեր:

Ներկայումս ոռոգումն ընթացքի մեջ է, ջրօգտագործողներին տրվել է 3.46 մլն խմ ջուր, որից 1.52 մլն խմ ինքնահոս եղանակով իսկ 1.94 մլն խմ՝ մեխանիկական:

Իջևանի տեղամասում խնդիրներ կան ներքին ցանցերում, որոնք գտնվում են վատ վիճակում և արդյունքում ունենում ենք ջրի մեծ կորուստ: Բերքաբերի ջրանցքի 5.4 կմ հատվածը գտնվում է անմխիթար վիճակում՝ պակասել է ջրթողունակությունը, կան ֆիլտրացիոն մեծ կորուստներ:

Բերդի տարածաշրջանում ջրամատակարարումը կատարվում է հիմնականում ինքնահոս եղանակով: Պառավաքարի և Տավուշի վարչական տարածքներում տեղադրված պոմպերը գործարկվում են ջրի սակավության ժամանակ՝ ինքնահոս համակարգերին դոտացիա տալու համար: Այս տարի դեռևս անհրաժեշտություն չի առաջացել պոմպերը գործարկելու: Բերդ համայնքում հիմնական խնդիրը, որին անհրաժեշտ է անդրադառնալ ոռոգման սեզոնից հետո, դա Բերդի d=500 մմ ջրատարի և գլխամասային հանգույցի հիմնանորոգումն է: Արծվաբերդում d=500 մմ ազբոխողովակի գծի շուրջ 2կմ հատվածը մետաղականով փոխարինելու կարիք կա:

Բերդավան համայնքում երկու պոմպերի համար կառուցված ՕԿՋ-ների ծավալը փոքր է և չի բավարարում երկար ժամանակով պոմպերի գործարկման համար:

Դեբեդավան համայնքի ջրամատակարարումը կատարվում է ինքնահոս և մեխանիկական եղանակներով: Ինքնահոս համակարգում խնդիրներն առաջանում են գլխամասային հանգույցի պատճառով, անհրաժեշտություն կա այն վերակառուցելու:

Քառաստիճան համակարգը սպասարկում է Զորական, Բերդավան և մասնակի Հաղթանակ համայնքներին, պոմպերի, էլեկտրահաղորդման գծերի և ենթակայանների մաշվածության պատճառով առաջանում են բազմաթիվ խնդիրներ: Զորական համայնքի ներքին ցանցի վատ վիճակի պատճառով կորուստները մեծ չափերի են հասնում:

Բերդ համայնքի Վ.Կ.Աղբյուր բնակավայրի վարչական ղեկավարի կողմից հնչեցվեց հետևյալ հարցը, որ բնակիչները դժգոհություն են հայտնում, ասելով, որ իրենք վճարում ենք ջրի վարձավճարները, բայց ՋՕԸ աշխատակիցը պնդում է,իբր չեն վճարում:

Մարզպետը հանձնարարեց այսուհետ ջրօգտագործման հետ կապված բոլոր խնդիրները հաշվառելու և ուսումնասիրելու համար բնակչությանը տրամադրել մարզպետարանում գործող թեժ գծի հեռախոսահամարը, և նշեց, որ զանգերի քանակի և որակի հիման վրա կհասկանանք արդյոք սա չարաշահում է, թե կոռուպցիոն ռիսկեր: Մարզպետը հավաստիացրեց, որ այս հարցը լինելու է իր հսկողության ներքո:

<u>Հանձնարարվեց.</u>

ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա.Գևորգյանին.

- Մարզպետարանի համապատասխան մասնագետներից ձևավորել հանձնախումբ՝ Վ.Կ.Աղբյուր բնակավայրի վարչական ղեկավար Կ.Զոբանյանի կողմից բարձրացված հարցի ուսումնասիրության նպատակով:

ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության և ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություններին.

- Հետևողական լինել ոռոգման ջրի հետ կապված ցանկացած խնդրի նկատմամբ, արձանագրել բոլոր դեպքերը և զեկուցել մարզպետին:

<u>Առաջարկվեց.</u>

Համայնքների ղեկավարներին.

- Մարզպետարանում գործող թեժ գծի հեռախոսահամարի մասին բոլոր հնարավոր միջոցներով տեղեկացնել բնակչությանը, որի միջոցով նրանք կարող են ջրամատակարարման վերաբերյալ խնդիր լինելու դեպքում անմիջապես ահազանգել

- ՋՕԸ-ի հետ համատեղ պատշաճ ձևով իրականացնել գումարների հավաքագրման աշխատանքները

- Հետևողական լինել ոռոգման ջրի հետ կապված ցանկացած խնդրի նկատմամբ, արագ արձագանքել դրանց

- Պլանավորել աշխատանքները ՋՕԸ-ի հետ՝ ջրօգտագործման գործընթացը ժամանակին և արդյունավետ իրականացնելու համար:

ՄԱՐԶՊԵՏ **Հ.ՉՈԲԱՆՅԱՆ**

26.07.2019

X

Արձանագրեց՝ Տ.Անտոնյանը